ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ք. Էջմիածին

25 հունիսի 2024թ.
Ժամը 11:00-ին

2024 թվականի հունիսի 25-ին ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի վարչական շենքում անցկացվեց «Համայնքի ղեկավարին կից կանանց և երիտասարդների խորհրդակցական մարմնի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ հանրային քննարկում:

Ելույթներ.

Մ.Պողոսյան – Համայնքի ղեկավարի խորհրդական Մ. Պողոսյանը ներկայացրեց, որ Կանանց և երիտասարդների հարցերով խորհրդակցական մարմինը (ԿԵԽՄ) համայնքի ղեկավարին կից, հասարակական կարգով գործող մարմին է, որի միջոցով ապահովվում է համայնքի բնակիչների կին ներկայացուցիչների և երիտասարդների մասնակցությունը համայնքի տեղական ինքնակառավարմանը և համայնքային խնդիրների լուծմանը: ԿԵԽՄ-ը, որպես քաղաքացիական հասարակության միավորված խումբ՝ համայնքային նշանակության հանրային հարցերի շուրջ կարող է խորհրդատվություն, եզրակացություններ և առաջարկություններ ներկայացնել համայնքի ղեկավարին՝ այդպիսով ակտիվ մասնակցություն ունենալով համայնքում տեղական ինքնակառավարմանը վերաբերող քաղաքականությունների մշակման, որոշումների ընդունման և դրանց իրականացման արդյունքների մոնիթորինգի և գնահատման գործընթացներին:

ԿԵԽՄ-ի գործունեության նպատակն է՝ նպաստել համայնքում տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացմանը, համայնքային նշանակության հանրային խնդիրների լուծմանը՝ ապահովելով համայնքի քաղաքացիական ակտիվություն ցուցաբերող կանանց և երիտասարդների հավասար մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը:

Կ.Եսայան – Համայնապետարանի Իրավաբանական բաժնի պետ Կ. Եսայանը ներկայացրեց համայնքի ղեկավարին կից կանանց և երիտասարդների խորհրդակցական մարմնի ձևավորման, գործունեության կարգը և խորհրդակցական մարմնի անդամության դիմումի ձևը, ինչպես նաև ԿԵԽՄ-ի գործունեությամբ պայմանավորված կողմերի գործառույթները:

Հարց ու պատասխանի բացակայության հիմքով հանրային լսումս ավարտվեց:

Որոշում

Ամփոփելով հանրային քննարկումը՝ որոշվեց «Համայնքի ղեկավարին կից կանանց և երիտասարդների խորհրդակցական մարմնի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» որոշման նախագիծը ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու հաստատմանը:

Զեռնարկող՝ Վաղարշապատի համայնքապետարան Դ. Գասպարյան

Քննարկման վարող և արձանագրող՝ Ս. Պողոսյան

Արձանագրությանը կցված է հանրային քննարկման մասնակիցների ցանկը՝ համապատասխան ստորագրություններով: